

Ազգային հաշիվների ցուցանիշներ

Վիճակագրական արտադրանք – Ազգային հաշիվներ (ՀՆԱ-ի նախնական գնահատումն արտադրական եղանակով, ընթացիկ և մշտական գներով (եռամսյակային), ՀՆԱ-ի նախնական գնահատումը ծախսային եղանակով, ընթացիկ և մշտական գներով (եռամսյակային) , Տարեկան հաշիվներ (տարեկան), Տարեկան հատվածային հաշիվներ (տարեկան) , Ֆինանսական և ոչ ֆինանսական հատվածների ավելացված արժեքներն ըստ ենթահատվածների (տարեկան), Համախառն ազգային եկամուտ (տարեկան))

Գործընթացներ	Ենթագործընթացներ	Ենթագործընթացի նկարագրություն
Կարիքների ձևակերպում		<p>Հայաստանի ծախսային, արտադրական և եկամուտների ձևավորման եղանակով հաշվարկված տարեկան և եռամսյակային համախառն ներքին արդյունքների վերաբերյալ տվյալներն ունեն օգտագործողների լայն շրջանակ: Հիմնական օգտագործողների թվում են երկրի տնտեսական քաղաքականության և տնտեսական կանխատեսման գործառույթներ իրականացնող պետական մարմինները, ինչպես նաև այլ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսավարկային կազմակերպությունները, գործարար միջավայրը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն՝ վերլուծությունների, մոդելավորման և կանխատեսումների նպատակներով:</p>
	1.1 Կարիքների բացահայտում	<p>Հաշվարկները հիմնվում են տարբեր աղբյուրների՝ հիմնականում Արմստատի կողմից իրականացվող պաշտոնական վիճակագրական դիտարկումների արդյունքների վրա: Կազմակերպությունների ամսական,</p>

		<p>եռամսյակային և տարեկան դիտարկումներն օգտագործվում են ՀՆԱ-ի որոշ բաղադրիչների հաշվարկման ժամանակ: Ի լրումն վերոնշյալի, օգտագործվում են նաև Արմստատի կողմից իրականացվող տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված և աշխատուժի ընտրանքային հետազոտությունների արդյունքները, ՀՀ ֆինանսների նախարարության (ՀՀ ՖՆ) կողմից տրամադրվող տեղեկատվությունը, ՀՀ կենտրոնական բանկից (ՀՀ ԿԲ), Արմստատի ստորաբաժանումներից և այլ գերատեսչություններից ստացվող տվյալները:</p> <p>Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ), արտադրողների գների ինդեքսը (ԱԳԻ), ապրանքների արտահանման և ներմուծման ինդեքսներն օգտագործվում են դեֆլատավորման համար:</p>
	<p>1.2 Խորհրդակցում և կարիքների հաստատում</p>	<p>Հայաստանում արտադրական, ծախսային և եկամուտների ձևավորման եղանակներով հաշվարկված տարեկան և եռամսյակային համախառն ներքին արդյունքների հաշվարկի ներդրումը սկսվել է 1992 թվականից, երբ Հայաստանը որդեգրեց տնտեսակարգի փոփոխության քաղաքականություն՝ ուղղված ազատական տնտեսական հարաբերությունների ձևավորմանը, որին անցումը ենթադրում էր դրան բնորոշ հաշվարկային համակարգի ներդրում միջազգայնորեն ընդունված հիմնադրույթների, սահմանումների, դասակարգումների և հաշվապահական կանոնների (ԱՀՀ-93, իսկ 2012 թվականից՝ ԱՀՀ-2008 և ԵՀՀ-2010) ամբողջության հիման վրա:</p>
	<p>1.3 Արտադրանքի նպատակների սահմանում</p>	<p>Ընդգրկվում են ԱՀՀ-2008-ում սահմանված բոլոր գործառնությունները: ՀՆԱ գնահատականը ներառում է բոլոր շուկայական գործառնությունները, ներառյալ ապրանքափոխանակությունը: Ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տնտեսությունը:</p>

<p>1.4 Հասկացությունների որոշում</p>	<p>ՀՆԱ-ն տարեկան և ըստ եռամսյակների կազմվում է ընթացիկ, նախորդ տարվա համադրելի, նախորդ տարվա միջին տարեկան գներով: Նախորդ տարվա համադրելի գներով տվյալների վերագնահատումը կատարվում է կրկնակի դեֆլատավորման եղանակի օգտագործմամբ: Համադրելի գներով գնահատման համար օգտագործվում են գները և հաշվարկման էքստրապոլացիայի եղանակը: Վերջինիս դեպքում կիրառվում են զբաղվածների թվաքանակը և տնտեսական գործունեության տեսակը բնութագրող այլ ծավալային ցուցանիշներ: Տվյալները ճշգրտվում են տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքների հիման վրա, ինչպես նաև, մասամբ հաշվի է առնվում արտադրական և ծախսային եղանակներով հաշվարկված ՀՆԱ-ների միջև ընդհանուր հաշվեկշռի անհրաժեշտությունը: Նախորդ տարվա գներով գնահատականը տրվում է ընթացիկ գներով ՀՆԱ բաղադրիչների դեֆլատավորման ճանապարհով՝ կիրառելով համապատասխան գների ինդեքսներ:</p>
<p>1.5 Տվյալների առկայության ստուգում</p>	<p>Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:</p>
<p>1.6 Բիզնես մոդելի նախապատրաստում</p>	
<p>Նախագծում</p>	
<p>2.1 Արդյունքների</p>	<p>Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության</p>

	նախագծում	մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
	2.2 Փոփոխականների նկարագրությունների նախագծում	
	2.3 Տվյալների հավաքման նախագծում	<p>Վիճակագրական տեղեկատվության հավաքումն իրականացվում է «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Վիճակագրական հնգամյա ծրագրի մասին» հիման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի «Տարեկան վիճակագրական ծրագրի»: Հաշվարկներն իրականացվում են ըստ տարբեր աղբյուրների՝ հիմնականում Արմստատի կողմից իրականացվող պաշտոնական վիճակագրական դիտարկումների տվյալների հիման վրա:</p> <p>Կազմակերպությունների ամսական, եռամսյակային և տարեկան դիտարկումներն իրականացվում են տնտեսական գործունեության բոլոր տեսակների համար, բացի գյուղատնտեսությունից: Վերջինիս վերաբերյալ տվյալները հավաքվում են 340000 գյուղացիական տնտեսություններից ընտրանքային եղանակով ընտրված 12090 տնտեսությունից, ինչպես նաև մոտ 100 առևտրային կազմակերպություններից ստացվող տվյալների հիման վրա:</p> <p>Ի լրումն վերոնշյալ տեղեկատվական աղբյուրների, օգտագործվում են նաև Արմստատի կողմից իրականացվող տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված և աշխատուժի ընտրանքային հետազոտությունների տվյալները:</p>

		<p>Պետական կառավարման մարմինների ծառայությունների, ինչպես նաև հարկային մուտքերի և սուբսիդիաների հաշվարկման համար օգտագործվում են ՀՀ ֆինանսների նախարարության (ՀՀ ՖՆ) կողմից տրամադրվող տվյալները: ՀՀ կենտրոնական բանկից (ՀՀ ԿԲ) ստացվող տվյալներն օգտագործվում են ֆինանսական գործունեության թողարկման, ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունների և տնտեսության ֆինանսական հատվածի հաշվարկների իրականացման համար:</p> <p>Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ), արտադրողների գների ինդեքսը (ԱԳԻ), ապրանքների արտահանման և ներմուծման ինդեքսները օգտագործվում են դեֆլատավորման համար:</p>
	<p>2.4 Գլխավոր համակցության և ընտրանքի նախագծում</p>	<p>Հայաստանի Ազգային հաշիվները կազմվում են համաձայն Ազգային հաշիվների համակարգի հիմնարար դասակարգումների, սահմանումների և հասկացությունների, ինչպես նաև այլ մեթոդաբանական հիմքերի:</p>
	<p>2.5 Մշակման և վերլուծության նախագծում</p>	<p>Տեղեկատվության հավաքումից հետո վիճակագրական ցուցանիշներն ենթարկվում են թվաբանական և տրամաբանական ստուգումների, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացվում են համապատասխան ճշգրտումներ նաև կապ հաստատելու միջոցով:</p>
	<p>2.6 Արտադրության համակարգերի և գործընթացի նախագծում</p>	<p>Տեղեկատվության հավաքումից մինչև դրա հրապարակումն իրականացվող բոլոր գործընթացների մասով կատարվում են նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես կապված ռեսպոնդենտներին համապատասխան իրազեկումներով ապահովելու, աշխատակիցներին անհրաժեշտ մասնագիտական դասընթացների միջոցով վերապատրաստելու և այլնի հետ:</p>

Կառուցում		
	3.1 Հավաքման գործիքի կառուցում	Տեղեկատվության հավաքումն իրականացվում է «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
	3.2 Գործընթացի բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում	Առկա են տեղեկատվության ստուգաճշտման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումներ ու հրահանգներ:
	3.3 Տարածման բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում	Տեղեկատվության տարածման համար առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակներով տեղեկատվության հրապարակման հնարավորություններ՝ եռամսյակային և տարեկան պարբերականությամբ՝ համաձայն տարեկան վիճակագրական ծրագրի:
	3.4 Գործընթացների կարգավորում	Վիճակագրական արտադրանքի ստացումն իրականացվում է իրար հաջորդող հետևյալ փուլերով՝ <ol style="list-style-type: none"> 1. տեղեկատվության հավաքում, 2. թվաբանական և տրամաբանական ստուգումներ և ճշգրտումներ, 3. ստացված ամփոփ տեղեկատվության համեմատում համապատասխան դինամիկ շարքերի հետ, 4. տեղեկատվության տարածում՝ ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով տեղեկատվական զեկույցներում, ինչպես նաև տեղեկատվության պաշտոնական հայցման դեպքում պաշտոնական պատասխան գրությունների միջոցով:
	3.5 Արտադրության համակարգի	

	փորձարկում	
	3.6 Վիճակագրական բիզնես գործընթացի փորձարկում	
	3.7 Արտադրության համակարգի վերջնականացում	Ամփոփվում են տեղեկատվություն ներկայացնողների հետ ցուցանիշների վերաբերյալ աշխատանքային քննարկումների արդյունքում ձեռք բերված համաձայնությունները:
Հավաքում		
	4.1 Գլխավոր համակցության և ընտրանքի ձևավորում	Ընդգրկվում են ԱՀՀ-2008-ում սահմանված բոլոր գործառնությունները: ՀՆԱ գնահատականը ներառում է բոլոր շուկայական գործառնությունները, ներառյալ ապրանքափոխանակությունը: Ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տնտեսությունը:
	4.2 Հավաքման կազմակերպում	
	4.3 Հավաքման իրականացում	
	4.4 Հավաքման վերջնականացում	Հավաքված տեղեկատվությունը թվաբանական և տրամաբանական ստուգաճշտման ենթարկվելուց հետո մուտքագրվում է էլեկտրոնային միջավայր: Տեղեկատվության մուտքագրումը իրականացվում է ինչպես մեխանիկական, այնպես էլ տեղեկատվությունը էլեկտրոնային միջավայր անմիջապես ներածելու եղանակով:
Մշակում		
	5.1 Տվյալների ինտեգրում	

	5.2 Դասակարգում և կողավորում	
	5.3 Վերանայում և հաստատում	Իրականացվում է թերի կամ աղավաղումներով ներկայացված տեղեկատվության ստուգաճշտում, ինչպես նաև ոչ ճիշտ տեղեկատվության համապատասխանեցում:
	5.4 Խմբագրում և իմպուտացիա	-
	5.5 Նոր փոփոխականների և միավորների ձևավորում	-
	5.6 Կշիռների հաշվարկում	-
	5.7 Ագրեգատների հաշվարկում	Մուտքագրված տեղեկատվության հիման վրա իրականացվում է ամփոփ տվյալների ստացում ըստ առանձին վիճակագրական ցուցանիշների:
	5.8 Տվյալների ֆայլերի վերջնականացում	Հաճախ, ելնելով օպերատիվ վիճակագրական տվյալների ստացման անհրաժեշտությունից, նախնական տեղեկատվության հիման վրա կատարվում է նախնական ցուցանիշների հաշվարկ, որոնք հետագայում ենթակա են ճշգրտման:
Վերլուծություն		
	6.1 Նախնական արդյունքների նախապատրաստում	Ստացված ամփոփ տեղեկատվության հիման վրա իրականացվում է վիճակագրական ցուցանիշների խմբավորումների, դինամիկ շարքերի կառուցում:
	6.2 Արդյունքների վավերացում	Ցուցանիշների ստացման ողջ ընթացքում խստորեն պահպանվում են դրանց ստացման մեթոդաբանական պահանջները՝ համաձայն նախապես սահմանված դասակարգումների, մեթոդաբանական ուղեցույցների:

		<p>Չհաշվառվող գործունեության և ստվերային տնտեսության մասով ճշգրտվում են թողարկման վերաբերյալ ներկայացվող տվյալները: Հաշվի առնելով տվյալների ոչ լրիվ ընդգրկունության փաստը, չներկայացումը կամ ոչ արժանահավատ տեղեկատվության ներկայացումը, հաշվարկների հիմքում դրված են արտադրանքի թողարկման, զբաղվածների թվաքանակի և արտադրանքի արտադրության մասնակիցների թվաքանակի վերաբերյալ տվյալները, որոնք ստացվում են պարբերաբար հավաքվող վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև տնային տնտեսությունների կենսամապայմանների ամբողջացված հետազոտության և աշխատուժի ընտրանքային հետազոտությունների արդյունքում: Ոչ ֆորմալ հատվածի ՀՆԱ-ում ունեցած մասնակցության չափը ներկայումս հաշվարկվում է կիրառելով 2009թ. իրականացված «Ոչ ֆորմալ հատվածը և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում» հետազոտության արդյունքներով ստացված գնահատականները: Կիրառվում են նաև անուղղակի մակրոտնտեսական մեթոդներ՝ օգտագործելով տարբեր տարիներին իրականացված առանձին ոլորտների վերաբերյալ հետազոտությունների գնահատականները և այլ տեղեկատվական աղբյուրներից ստացված տեղեկատվությունը:</p>
	<p>6.3 Արդյունքների մեկնաբանում և բացատրում</p>	<p>Ամփոփ ցուցանիշների ստացումից հետո իրականացվում է դրանց տրամաբանական վերլուծում՝ օգտագործելով տնտեսությունում տեղի ունեցող տարաբնույթ երևույթների ազդեցությունը ՀՆԱ-ի վրա:</p>
	<p>6.4 Բացահայտման հսկողության կիրառում</p>	<p>Ցուցանիշների վերաբերյալ հակիրճ մեթոդաբանական պարզաբանումները հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի եռամսյակային հրապարակումներում, իսկ առավել մանրամասն՝</p>

		«Հայաստանի ազգային հաշիվները» վիճակագրական ժողովածուում:
	6.5 Արդյունքների վերջնականացում	Մինչ ամփոփ տեղեկատվության տարածումը իրականացվում է ՀՆԱ-ի վերաբերյալ ամփոփ ցուցանիշների վերլուծություն:
Տարածում		
	7.1 Ելքային համակարգերի արդիականացում	Իրականացվում են հրապարակման ենթակա վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ համապատասխան աղյուսակների պատրաստում: Անհրաժեշտության դեպքում նաև փոփոխություններ և/կամ լրացումներ են կատարվում համապատասխան ցուցանիշի հասկացություններում և մեթոդաբանական պարզաբանումներում:
	7.2 Տարածման արտադրանքների արտադրում	<p>Տարածվող արտադրանքների համար իրականացվում են արտադրման բոլոր քայլերը՝ բացատրական տեքստի, աղյուսակների, գծապատկերների և այլ նյութերի նախապատրաստում, այդ արտադրանքների խմբագրում և դրանց համապատասխանեցում հրապարակման ստանդարտներին:</p> <p>Վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է հայերեն, անգլերեն և/կամ ռուսերեն լեզուներով հրապարակվում է ներքոհիշյալ տարեգրքերի և վիճակագրական ժողովածուների միջոցով.</p> <ol style="list-style-type: none"> 1. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն, անգլերեն), 2. «Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն, անգլերեն), 3. «Հայաստանի Ազգային Հաշիվները» ՀՀ-ում վիճակագրական ժողովածու (հայերեն, անգլերեն),

		<p>Տվյալների բազաներ</p> <p>http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</p> <p>Էլեկտրոնային տարբերակ</p> <p>Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով. http://www.armstat.am/</p> <p>Տվյալների բազայի Ազգային հաշիվների բաժնում http://www.armstat.am/am/?nid=263 հրապարակվում են ՀՆԱ-ի վերաբերյալ հետևյալ</p>
	<p>7.3 Տարածման արտադրանքների թողարկման կառավարում</p>	<p>Վիճակագրական տեղեկատվության տարածումը կատարվում է համապատասխան Արմստատի հնգամյա և տարեկան վիճակագրական ծրագրերով նախատեսված ժամանակացույցի: Վիճակագրական տեղեկատվություններ կայացնողների կողմից ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության փոփոխման կամ ճշգրտումների կատարման դեպքում համապատասխան փոփոխությունների և ճշգրտումների են ենթարկվում նաև Արմստատի կողմից արդեն իսկ հրապարակված ցուցանիշները:</p>
	<p>7.4 Տարածման արտադրանքների խթանում</p>	<p>Տարածման արտադրանքների տրամադրում: Գործիքների օգտագործում օգտագործողների հետ հաղորդակցությունը կառավարելու համար: Կայքի, ֆեյսբուքի և այլ միջոցների օգտագործում:</p>
	<p>7.5 Օգտագործողների աջակցության կառավարում</p>	<p>Վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների կողմից չհրապարակվող ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության պաշտոնական հայցման դեպքում հնարավորության սահմաններում իրականացվում է լրացուցիչ ցուցանիշների հաշվարկ և տրամադրում նրանց՝ միաժամանակ պահպանելով վիճակագրական տեղեկատվության նկատմամբ գաղտնիության սկզբունքը:</p>

Գնահատում		
	<p>8.1 Գնահատման միջոցների հավաքում</p>	<p>Չհաշվառվող գործունեության և ստվերային տնտեսության մասով ճշգրտվում են թողարկման վերաբերյալ ներկայացվող տվյալները: Հաշվի առնելով տվյալների ոչ լրիվ ընդգրկունության փաստը, չներկայացումը կամ ոչ արժանահավատ տեղեկատվության ներկայացումը, հաշվարկների հիմքում դրված են արտադրանքի թողարկման, զբաղվածների թվաքանակի և արտադրանքի արտադրության մասնակիցների թվաքանակի վերաբերյալ տվյալները, որոնք ստացվում են պարբերաբար հավաքվող վիճակագրական հաշվետվություններով կենսապայմանների ամբողջականացված հետազոտության և աշխատուժի ընտրանքային հետազոտությունների արդյունքում: Ոչ ֆորմալ հատվածի ՀՆԱ-ում ունեցած մասնակցության չափը ներկայումս հաշվարկվում է կիրառելով 2009թ. իրականացված «Ոչ ֆորմալ հատվածը և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում» հետազոտության արդյունքներով ստացված գնահատականները: Կիրառվում են նաև անուղղակի մակրոտնտեսական մեթոդներ՝ օգտագործելով տարբեր տարիներին իրականացված առանձին ոլորտների վերաբերյալ հետազոտությունների գնահատականները և այլ տեղեկատվական աղբյուրներից ստացված տեղեկատվությունը, ինչպես նաև տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության և աշխատուժի ընտրանքային հետազոտությունների արդյունքում:</p>
	<p>8.2 Գնահատման իրականացում</p>	<p>Ազգային հաշիվներում տվյալների հնարավոր անճշտությունը կապված է տարբեր աղբյուրներից ստացվող տվյալների անհամապատասխանության հետ:</p>
	<p>8.3 Գործողությունների</p>	<p>Արտադրական և ծախսային եղանակներով հաշվարկված եռամսյակային ՀՆԱ-ի տարբերությունը հաշիվներում ցույց է</p>

	ծրագրի համաձայնեցում	տրվում որպես վիճակագրական շեղում:
--	-------------------------	-----------------------------------